ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍԹՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING

# 2017



| Հիմնական ցուցանիշներ<br>Main indicators | Վարկավորում<br>Lending | Ֆակտորինգ<br>Factoring | Ներդրումներ<br>Investments | Ֆինանսական արդյունքներ<br>Financial results |
|---|---|---|---|---|

## Տարեկան հաշվետվություն

## Annual Report

Տարեկան հաշվետվություն

**2017**

Annual Report



## Բովանդակություն
## Content

Բանկի գործադիր տնօրենի ուղերձը
Message of the Bank's Executive Director
6-10

Հիմնական ցուցանիշներ և ձեռքբերումներ
Main indicators and achievments
11-13

Բանկի ղեկավար անձինք
Management of the Bank
14-15

Վարկավորում
Lending
16-23

Ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորման գործիքներ
Factoring and trade finance instruments
24-29

Ներդրումային բանկային ծառայություններ
Investment banking services
30-37

Ֆինանսական արդյունքներ
Financial results
38-43

Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
Financial statements and independent auditor's report
44-57

Օգտակար տեղեկատվություն բանկի մասին
Useful information about the Bank
58-61



*Կակաչի դաշտեր, Լոռի*
*The field of tulips, Lori*

# Բանկի գործադիր տնօրենի ուղերձը
# Message of the Bank’s Executive Director



## ԳԵՎՈՐԳ ՄԱՉԱՆՅԱՆ

Տնօրինության նախագահ
Բանկի գործադիր տնօրեն

Հարգելի հաճախորդներ, գործընկերներ, աշխատակիցներ և բաժնետերեր

2017 թվականը Բանկի գործունեության համար եղել է հաջողակ տարի: Բանկը հաջողություններ է գրանցել ինչպես ֆինանսական դրական արդյունքներ արձանագրելու, այնպես էլ չափազանց մրցակցային միջավայրի պայմաններում իր դիրքի ամրապնդման և զարգացման առումով:

2017 թվականին Բանկն ապահովել է շուրջ 3.67 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Վերջինս նույն ժամանակահատվածի համար պլանավորված ցուցանիշը գերազանցել է 11.7%-ով: Շահույթի մեծությամբ գործող 17 առևտրային բանկերի թվում Բանկը զբաղեցրել է 6-րդ տեղը՝ գեներացնելով ՀՀ բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 9.6%-ը: Թեպետ ՀՀ բանկային համակարգում ակտիվների և վարկային ներդրումների ծավալներով Բանկը չի զբաղեցնում առաջնային դիրքեր, սակայն ROA և ROE ցուցանիշներով Բանկը շարունակում է պահպանել իր տեղը ՀՀ բանկային համակարգի առաջնային հնգյակում: Ավելին, 2017թ-ի գործունեության արդյունքներով մեկ աշխատողին բաժին ընկնող հասույթի և զուտ շահույթի ցուցանիշների գծով Բանկը պահպանել է համակարգում իր առաջատար դիրքերը՝ համապատասխանաբար զբաղեցնելով համարկարգում 1-ին և 2-րդ հորիզոնականները:

Չնայած բանկային համակարգում առկա սուր մրցակցությանը, Բանկի խորհրդի, տնօրինության և աշխատակիցների ջանքերի շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ: Հաճախորդների հետ մեր ամենօրյա աշխատանքն նպաստում է Բանկի կողմից մատուցող ծառայությունների ընդլայնմանը և մատչելի պայմաններով ֆինանսական միջոցների ապահովմանը՝ առավելագույնս բավարարելով նրանց պահանջմունքները:

Բանկը շարունակել և խորացրել է հարաբերությունները գործընկերների հետ, մասնավորապես՝ «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ»-ի (ՎԶԵԲ), «Ասիական զարգացման բանկ»-ի (ԱԶԲ), «Միջազգային ֆակտորինգային ընկերության», «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» (ՀԱԱԳ) ԱՓԲԸ-ի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների հետ՝ հաճախորդներին տարբեր գործիքներով ֆինանսավորելու նպատակով:

Բանկը շարունակել է իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ պահպանելով պետական պարտատոմսերի շուկայի գործակալի կարգավիճակը և հանդես գալով ֆոնդային բորսայում որպես արժեթղթերի մարքեթ մեյքեր Բանկն ապահովում է 1 բաժնետոմսի և ՀՀ որոշ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված 8 պարտատոմսերի երկողմանի գնանշումներ: Բանկային համակարգում Բանկն արժեթղթերի պորտֆելի ծավալով զբաղեցնում է 1-ին հորիզոնականը:

## GEVORG MACHANYAN

Chairman of the Management Board
Executive Director

Dear customers, partners, employees and shareholders

2017 has been a successful year for the Bank’s activity. The Bank has achieved success in terms of recording positive financial results, as well as strengthening and further developing the Bank’s status in an extremely competitive environment.

In 2017, the Bank has provided around USD 3.67 billion in net profits. Which is 11.7% more than it was planned for the reporting year in terms of profit volume. The Bank ranks the 6th amongst the 17 commercial banks in Armenia; generating around 9.6% of the total profit of the RA banking system. Although the Bank doesn’t occupy the leading positions in the volume of assets and credit investments in the banking system of the RA however, the Bank continues to keep its place among the top five banks of the Armenian banking system by ROA and ROE. Furthermore, as a result of 2017 activities, with the both net profit and income per employee indicators the Bank maintained its leading position in the banking system and ranked the 1st and 2nd positions, respectively.

Despite the sharp competition in the banking system, thanks to the efforts of the Bank’s Board, Managment Board and staff, it has become possible to maintain competetive conditions of services provided by the Bank and attract new customers. Day-to-day work with our customers with the progressive way has promote to the expansion of the products offered by the Bank and providing affordable financial means, to meet customer’s needs maximally.

The Bank has continued and deepened relationship with its partners, particularly, the “Asian Development Bank” (ADB), “European Bank of Reconstruction and Development” (EBRD), “Factors Chain International” (FCI), “Export Insurance Agency Of Armenia” (EIA), “German-Armenian Fund” (GAF), “National Mortgage” and “Home For Youth” UCO CJSCs; with the emphasis of providing the customers with a wide range of financial instruments.

The bank has carried on its effective investment activity by maintaining its status as State Bonds’ market’s agent and acting as the market-maker of securities in Stock Exchange the Bank provide bilateral quotations 8 bonds issued by the some Bank’s and other financial organizations of RA and 1 share. The Bank ranks the 1st in

Լրացուցիչ միջոցների ներգրավման նպատակով Բանկի համար առանձնահատուկ էր 2017թ-ի ընթացքում իրականացված պարտատոմսերի 3 տրանշների թողարկումը՝ 10 մլն ԱՄՆ դոլար, 10 մլն եվրո և 2 մլրդ ՀՀ դրամ անվանական ծավալներով ու համապատասխանաբար 7, 6 և 4 տարի մարման ժամկետներով: Վերջիններս 2017 թվականի ընթացքում սահմանված կարգով ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայում:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, կենսաթոշակային ակտիվների կառավարիչների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ առաջարկելով նրանց ծառայություններ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում՝ հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու տարբեր ֆինանսական գործիքներում:

Մենք շարունակելու ենք աշխատել նույն եռանդով և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին ու հետամուտ լինելով հաջորդ տարիների մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Բանկի խորհրդին և բաժնետերերին՝ ցուցաբերած վստահության, աջակցության և փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև Բանկի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքի համար:

the banking system in terms of its securities' portfolio volume.

For the purpose of attracting additional funds the Bank has issued 3 tranches of bonds during 2017, which was of particular significance, with a nominal value of USD 10 million, EUR 10 million and AMD 2 billion and maturity of 7, 6 and 4 years, respectively. In 2017, the issued bonds were reflected in the lists of "NASDAQ OMX ARMENIA" OJSC as per the established order.

The Bank devoted special attention to its role in the Financial Market as mediation service provider for banks, non-bank financial institutions, pension funds' managers, insurance and investment companies; through offering various products in both RA and international financial markets, enabling investments in various financial instruments.

We will strive to work with the same enthusiasm and determination, staying true to our principles and pursuing our strategic objectives in the forthcoming years. On behalf of the Bank staff, I would like to express my sincere gratitude towards our Customers, Partners, Bank's Board members and shareholders, for their trust and mutual beneficial cooperation.

I would like to express my trust and gratitude to the staff of the Bank too, for their demonstrated professionalism and dedicated commitment.

**Գևորգ Մաչանյան**
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն



**Gevorg Machanyan**
Chairman of the Board Management
Executive Director

# Հիմնական ցուցանիշներ և ձեռքբերումներ
# Main indicators and achievments



- Միջազգային ֆինանսական շուկայում հայտնի Thomson Reuters տեղեկատվական գործակալությունը Բանկին շնորհել է «Տվյալների մատակարարման գծով լավագույն գործընկեր» մրցանակ: Բանկը ՀՀ տարածքում գործող եզակի բանկերից է, որը Thomson Reuters ֆինանսական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայք էջում իրականացնում է ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական արժեթղթերի, արտարժութային ֆորվարդային, միջբանկային ավանդային տոկոսադրույքների ամենօրյա երկկողմանի անընդհատ գնանշումներ, ինչպես նաև օրական պարբերականությամբ տեղադրում է ՀՀ ֆինանսական շուկայի վերաբերյալ վերլուծական նյութեր:

- 2017թ-ի երկրորդ եռամսյակի արդյունքներով Բանկը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արժանացել է պետական պարտքի կառավարման գծով յոթ գործակալներից ամենաբարձր գնահատականին պետական պարտքի կառավարման գծով:

- Բանկի կողմից տեղաբաշխվել են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով պարտատոմսեր, որոնց շրջանառության ժամկետներն աննախադեպ են եղել ՀՀ ֆինանսական շուկայի համար. համապատասխանաբար՝ 4, 7 և 6 տարի: Ընդ որում, ՀՀ ֆինանսական շուկայում Բանկն առաջին անգամ թողարկել է եվրոյով արտահայտված կորպորատիվ պարտատոմսեր:

- Բանկն անդամակցել է «ԱՐՔԱ» վճարային համակարգին՝ ստանալով «ԱՐՔԱ» վճարային համակարգի թողարկող և սպասարկող անդամի կարգավիճակ: Միաժամանակ Բանկին շնորհվել է MasterCard միջազգային վճարային համակարգի ասոցացված (affiliate) անդամի կարգավիճակ:

- Սոցիալական պատասխանատվության միջոցառումների շրջանակում Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել մշակութային, սոցիալական, կրթական բնույթի միջոցառումների ֆինանսավորման գործում: Մասնավորապես, 2017թ-ի ընթացքում Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում Բանկի կողմից տեղադրվել է էլեկտրոնային վահանակ, որի միջոցով թարգմանվում են օպերային ներկայացումների տեքստերը: Բանկը հանդես է եկել որպես Արամ Խաչատրյանի անվան հինգերորդ միջազգային փառատոնի հովանավոր, աջակցություն է ցուցաբերել Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի հավաքածուն արժեքավոր ցուցանմուշներով համալրելու աշխատանքներին: Ամանորի նախաշեմին Բանկը Վորլդ Վիժն Հայաստան գրասենյակի միջոցով Ամասիայում ապրող 90 երեխայի նվիրել է փաթեթներ՝ կազմված հեքիաթների գրքերից և ինտելեկտուալ խաղերից, ֆինանսական օգնություն է ցուցաբերել սոցիալապես անապահով սիրիահայ 6 ընտանիքի:



*Լալվարի լեռան լանջեր, Լոռի*

*The slops of Lalvar mountain, Lori*

- The widely known Thomson Reuters Information agency has endowed the Bank with the “Best market Data Provider” award. The Bank is one of the unique ones operating in the Republic of Armenia that provides daily updates on the official website of the Thomson Reuters financial information system, submitting bilateral quotations on Armenian drams and major foreign currencies’ exchange rates, RA government securities, foreign exchange forwards and interbank deposit interest rates, as well as submitting daily analytical articles concerning the current situation in Armenian financial market.

- Based on the activity results of the second trimester of the year 2017, the Bank was rated the highest amongst the seven agents of government debt service by the RA Ministry of Finance .

- The Bank has placed bonds in AMD, USD and EUR, with unprecedented terms for Armenian financial market; 4, 7 and 6 years, respectively. Moreover, for the first time in RA financial market the Bank has issued corporate bonds in EUR.

- The bank has become a member of “ArCa” payment system, receiving the status of issuer and servicer member of “ArCa” payment system. At the same time, the Bank was granted the status of an affiliate member of MasterCard international payment system.

- Remaining true to the values of corporate-social responsibility, the Bank was actively involved in financing events of cultural, social and educational nature. In 2017 particularly, a digital screen has been installed in the theatre of the National Academic Theater of Opera and Ballet, which would enable simultaneous translation of the opera performances’ texts. The Bank sponsored the Aram Khachaturyan Fifth International Festival, and collaborated in the efforts of adding up valuable exhibits to the Aram Khachaturyan House-Museum’s collection. For the New Year eve, partnering with the World Vision Armenia office, the Bank has made donations to 90 children living in Amasia village, giving away fairy-tales books and intellectual games, as well as providing financial support to 6 socially vulnerable Syrian-Armenian families.

# Բանկի ղեկավար անձինք
# Management of the Bank

## Կարեն Տուրյան

Տնօրինության անդամ
Գործադիր տնօրենի տեղակալ

Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

## Գրիգոր Հովհաննիսյան

Տնօրինության անդամ
Գործադիր տնօրենի տեղակալ

Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

## Արկադի Փինաչյան

Տնօրինության անդամ
Գործադիր տնօրենի տեղակալ

Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

## Գևորգ Խաչատրյան

Տնօրինության անդամ
Գործադիր տնօրենի տեղակալ

Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

## Գրիգոր Մովսիսյան

Տնօրինության անդամ
Գործադիր տնօրենի տեղակալ

Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն

## Սեդրակ Բաղդասարյան

Տնօրինության անդամ
Գլխավոր հաշվապահ

Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն













## Karen Turyan

Management Board Member

Deputy Ceo-Director of Investment Department

## Grigor Hovhannisyan

Management Board Member

Deputy Ceo-Director of Lending Department

## Arkadi Pinachyan

Management Board Member

Deputy Ceo-Director of Business Development Department

## Gevorg Khachatryan

Management Board Member

Deputy Ceo-Director of Customer Service Department

## Grigor Movsisyan

Management Board Member

Deputy Ceo-Director of Risk Managment and Compliance Department

## Sedrak Baghdasaryan

Management Board Member

Chief Accountant-Head of Accounting and Reporting Department



*Ձնծաղիկներ, Թեղենիս*
*Snowflakes, Teghenis*

**Վարկավորում**
**Lending**

**Բանկի 2017 թվականի վարկային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները.**

Վարկային գործիքներ և վարկային պորտֆել

- Բանկը շարունակել է առաջարկել կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ՝ վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, բանկային երաշխիքներ, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման խթանման ֆինանսավորում, նախագծային ֆինանսավորում, ակրեդիտիվ, ֆակտորինգ և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:

- Բանկը կապիտալ ներդրումների, էներգա-արդյունավետության բարձրացման և/կամ շրջանառու միջոցների համալրման նպատակով առաջարկում է միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ, առևտրի ֆինանսավորման նպատակով՝ կարճաժամկետ ֆինանսավորման գործիքներ և այլն:

- Աշխատանքներ են տարվել լրացուցիչ վարկատեսակների մշակման ու ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, պահեստում գտնվող ապրանքների կոշտ գրավով վարկավորման, կապիտալի գնահատման, կազմակերպության բրենդի արժեքի գնահատման և դրա ապահովությամբ վարկային պրոդուկտների ներդրման ուղղությամբ:

- Մասնագիտացված չլինելով մանրածախ բանկային ծառայությունների շուկայում Բանկն առանձնակի հետաքրքրություն ունի հիփոթեքային վարկավորման ոլորտում, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճի տեմպեր:

- Վարկային ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում Բանկի սեփական ռեսուրսները և միջազգային ու տեղական վարկավորող ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ծրագրային միջոցները: Տարեվերջի դրությամբ ներգրավված ծրագրային միջոցների մասնաբաժինն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 12.5%:



*Դաշտային ճանապարհ, Տավուշ*

*Field road, Tavush*

**The main indicators and events characterizing the Bank's lending activity in 2017.**

Credit instruments and credit portfolio

- The Bank continued offering a wide range of corporate banking services, including loans, lines of credit, overdraft, bank guarantees, letters of credit, purchase order financing, export financing, project financing, factoring and other services based on customer needs.

- The Bank offers medium or long term financing instruments for replenishment of capital investments, energy efficiency and / or working capital, as well as short-term financing instruments for trade finance, etc.

- The Bank worked towards the development and implementation of additional lending products, in particular, lending by firm pledge of products available in reserves, capital financing, valuation services, and assessment of the organization's brand value and introduction of credit products by guarantee.

- Although the Bank is not specialized in provision of retail banking services, but there are some products in the industry, which are offered to corporate clients in order to make complex package of banking services. From abovementioned it is worth to separate the mortgage lending sector, where the Bank has recorded a steady growth ratesthroughout the years.

- The main sources of the Bank's credit portfolio are Bank's own resources.They are followed by various funds attracted from local and international financial organizations, whose share in the loan portfolioas of the end of the yearamounted 12.5%.

- At the end of the year, the Bank collaborated with the following international organizations;

  - EBRD – lending of Small and medium Enterprises (SME) within the framework of trade financing programs.

- Տարեվերջի դրությամբ Բանկը համագործակցել է.
  - ՎԶԵԲ-ի հետ՝ ՓՄՁ վարկավորման և Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում,
  - «Գերմանահայկական հիմնադրամ»-ի հետ՝ Վերականգնվող Էներգիայի զարգացման ֆինանսավորման ծրագրի շրջանակում,
  - ԱԶԲ-ի հետ՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում,
  - «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, Էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և բնակարանային միկրովարկերի ծրագրերի շրջանակներում,
  - «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակում:
- Տարեվերջի դրությամբ վարկային պորտֆելը կազմել է 61.3 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 36%-ով:
- Վարկային ներդրումներից ստացված տոկոսա-յին եկամուտները կազմել են 5.9 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 25.5%-ով:

  - GAF, within the framework of "Renewable Energy Development" financing program.
  - ADB within the framework of trade financing programs.
  - The "National Mortgage Company" RCO CJSC, in the framework of refinancing mortgage loans, energy-efficient repair loans and housing micro-credit programs.
  - Home for Youth UCO CJSC within the framework of refinancing mortgage loan programs.
- The loan portfolio amounted to AMD 61.3 billion, which exceeds the previous period status by 36%.
- The interest income from credit investments amounted to AMD 5.9 billion, registering an increase of nearly 25.5% compared to the indicators of the last year's corresponding period.

Վարկային պորտֆելի դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

Dynamic of the loan portfolio (AMD Bln)




Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

The Dynamic of interest income on lending activities (AMD Bln)



## 31.12.2017 թ-ի դրությամբ վարկային պորտֆելի կառուցվածքը՝ ըստ արժույթների

## Distribution of the loan portfolio by currencies as of 31.12.2017




- Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ առանձին ճյուղերի և ոլորտների՝ նվազեցնելով առանձին ճյուղերում վարկերի կենտրոնացումը:

- From the perspective of effective credit risk management, the Bank pays special attention to the diversification of the loan portfolio by separate branches and sectors, reducing the concentration of loans within independent sectors.

## Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի

## The structure of the loan portfolio according to the sectors of economy





*Քարերի սիմֆոնիա, Գառնու կիրճ*
*Symphony of stones, gorge of Garni*

## Ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորման գործիքներ
## Factoring and trade finance instruments

## Բանկի 2017 թվականի ֆակտորինգի և առևտրի ֆինանսավորման գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները

- Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկն ունեցել է ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրք, և այդ առումով 2017թ-ին ևս շարունակել է պահպանել ու զարգացնել իր ծառայությունների ծավալները:

- Հաճախորդներին ֆակտորինգի և միջազգային առևտրի ֆինանսավորման ծառայությունների շրջանակում Բանկն առաջարկում է ներքին ռեգրեսով ու առանց ռեգրեսի ֆակտորինգ, դեբիտորական պարտքի ֆինանսավորում, նախաարտահանման ֆինանսավորում, արտահանման և ներմուծման ֆակտորինգ (միջազգային ֆակտորինգ), ակրեդիտիվ, ինկասո ու միջազգային բանկային երաշխիք:

- Բանկը համագործակցում է ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի, ՀԱԱԳ-ի, ինչպես նաև տարբեր երկրների այլ գործընկեր բանկերի հետ, անդամակցում է FCI առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների ցանցին: Նման համագործակցությունը Բանկին թույլ է տալիս մատուցել միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան ֆակտորինգային և առևտրի ֆինանսավորման ծառայություններ:

- Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի ամենաակտիվ գործընկերը մնում է ՎԶԵԲ-ը: Հաշվետու ժամանակահատվածում ՎԶԵԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի համար նախատեսված սահմանաչափը կազմել է 9 մլն ԱՄՆ դոլար:

- Բանկն ընդլայնել է համագործակցությունը նաև ԱԶԲ-ի հետ՝ հատկապես կարճաժամկետ վարկերի վերաֆինանսավորման մասով: ԱԶԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի սահմանաչափն ավելացել է 3 մլն ԱՄՆ դոլարով՝ տարեվերջի դրությամբ կազմելով 5 մլն ԱՄՆ դոլար:

- Բանկն ԱՖԾ-ի (Առևտրի ֆինանսավորման ծրագրի) շրջանակներում ֆինանսավորել է շուրջ 18.5 մլն ԱՄՆ դոլարի 235 գործարք՝ նախորդ տարվա 9.3 մլն ԱՄՆ դոլարի և համապատասխանաբար 138 գործարքի փոխարեն:



*Ծիածան, Շիրակ*

*The rainbow, Shirak*

## The main indicators and events characterizing the activities of Bank's factoring and trade finance in 2017

- The Bank has a leading position in Armenian banking system in field of trade finance and continued to maintain and develop the scope of the offered services in 2017.

- Within the framework of factoring and international trade financing services, the Bank offers its clients domestic recourse and non-recourse factoring, receivables' financing, pre-export financing, export and import factoring (international factoring), letters of credit, documentary collection and international banking guarantee.

- The Bank appears to be a member of FCI, cooperates with EBRD, ADB and EIA as well as with other banks from various countries, which gives us an opportunity to provide our customers factoring and trade finance services matching international best standards.

- During the reporting year most active partner of the Bank in the scope of trade finance remained EBRD. The limit, provided by EBRD for TFP transactions is USD 9 million.

- The Bank has deepened the collaboration with ADB, particularly with regard to the refinancing of short-term loans. The limit for ADB Trade Finance Program has increased by USD 3 million, concluding to USD 5 million by the end of the year.

- Within the scope of TFP the Bank implemented 235 transactions in the amount of USD 18.5 million, instead of previous year's 138 transactions in amount of USD 9.3 million.

- By the end of the year, the Bank's TFP portfolio amounted to AMD 10.2 million instead of the previous year's USD 6.2 million.

- The bank issued USD 2.5 million worth letters of credit and guarantees.

- Տարեվերջի դրությամբ Բանկի ԱՖԾ-ի պորտֆելը կազմել է 10.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 6.2 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

- Բանկը թողարկել է 2.5 մլն ԱՄՆ դոլարի չափով ակրեդիտիվ և երաշխիք:

- Բանկը հաջողություններ է գրանցել նաև ֆակտորինգային գործառնությունների ոլորտում: Բանկի ֆակտորինգային պորտֆելը տարեվերջին կազմել է 1,770 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 92%-ով: Նշված ցուցանիշին Բանկը կարողացել է հասնել գործող հաճախորդների հետ համագործակցության խորացման և նոր հաճախորդների ակտիվ ներգրավման շնորհիվ: Այսպես, տարվա ընթացքում ներգրավվել է ֆակտորինգային 50 նոր հաճախորդ և 38 նոր դեբիտոր:

- Ֆակտորինգային ծառայություններից են օգտվում թեթև և սննդի արդյունաբերության, մեծածախ ու մանրածախ առևտրի, առողջապահության, տրանսպորտի, քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, ջերմոցային տնտեսության, տեքստիլ արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտներ ներկայացնող ընկերություններ:

- Բանկը դեռևս 2015թ-ից տարեցտարի հետևողականորեն զարգացրել է արտահանման ֆինանսավորումը՝ աջակցելով հայրենական արտադրողների արտահանման հնարավորությունների զարգացմանը: Հաշվետու տարում իրականացված արտահանման ֆինանսավորման (ներառյալ նախաարտահանման ֆինանսավորման) գործարքների ծավալն աճել է 2.6 անգամ կազմելով 3.4 մլրդ ՀՀ դրամ նախորդ տարվա 1.3 մլրդ ՀՀ դրամի փոխարեն:

- Տարեվերջի դրությամբ ՀԱԱԳ-ի կողմից ապահովագրված ֆինանսավորումների պորտֆելը կազմել է շուրջ 1.1 մլրդ ՀՀ դրամ նախորդ տարվա 580 մլն ՀՀ դրամի փոխարեն: Բանկը հանդիսացել է ՀԱԱԳ-ի ամենաակտիվ գործընկերը ՀՀ բանկային համակարգում:

- The Bank has also registered success in factoring operations. The factoring portfolio amounted to AMD 1.770 million at the end of the year; an increase of nearly 92% compared to the previous year's corresponding period. The Bank accomplished this indicator through conscious efforts to deepen its relationships with the existing clients and by actively thriving to attract new ones. Particularly, 50 new factoring clients and 38 new debitors were attracted during the year.

- The Bank's factoring products are used by companies representing food industry, wholesale and retail trade, healthcare, transportation, chemicals, mining, greenhouse industry, textile industry and other sectors of the economy.

- Since 2015, the Bank has consistently developed export financing, by supporting the exporting potential of local producers . The volume of export financing transactions (including pre-export financing) has increased by 2.6 times in the reporting year, concluding to AMD 3.4 billion instead of the previous year's AMD 1.3 billion.

- By the end of the year, the loan portfolio insured by EIA has amounted to about AMD 1.1 billion, compared with AMD 580 million in the previous year. The Bank has been the most active partner of EIA in Armenian banking system.

Ֆակտորինգային գործարքների տարեկան ծավալները (մլրդ ՀՀ դրամ)

Annual volume of factoring transactions (AMD bln)



## Ներդրումային բանկային ծառայություններ
## Investment banking services



*Պարզ լիճը աշնանը, Տավուշ*
*Parz lake in autumn, Tavush*

**Բանկի 2017 թվականի ներդրումային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները**

*Դիլերային գործունեություն*

- Բանկային համակարգում Բանկն արժեթղթերի պորտֆելի ծավալով զբաղեցրել է 1-ին հորիզոնականը:

- Արժեթղթերի պորտֆելի տարեվերջյան հաշվեկշռային արժեքը 82.6 մլրդ ՀՀ դրամ է, իսկ անվանական արժեքը՝ 80.6 մլրդ ՀՀ դրամ: Արժեթղթերի պորտֆելի շուրջ 97%-ը կազմել են պետական պարտատոմսերը:

- Արժեթղթերի պորտֆելն աճել է նախորդ տարեվերջի փաստացի ցուցանիշի նկատմամբ 35.8%-ով, իսկ հաշվետու ժամանահատվածի պլանավորված ցուցանիշի նկատմամբ՝ 31.1%-ով:

- Բանկի ՀՀ եվրոպարտատոմսերի պորտֆելը 16 մլն ԱՄՆ դոլարից հասել է 19,5 մլն ԱՄՆ դոլարի:

- Բանկը գնել է 36.6 մլրդ ՀՀ դրամի ու վաճառել 22.6 մլրդ ՀՀ դրամի պետական պարտատոմսեր, որից 8.2 մլրդ ՀՀ դրամի պետական պարտատոմսերը գնել է առաջնային շուկայից, 2.8 մլրդ ՀՀ դրամի՝ վաճառել է Թողարկողին՝ հետգնման աճուրդների միջոցով:

- Բանկը կորպորատիվ արժեթղթերով իրականացրել է շուրջ 1.9 մլրդ ՀՀ դրամի գործարքներ:

- Բանկը ռեպո համաձայնագրերով ներգրավել է 175.4 մլրդ ՀՀ դրամի և իր հաճախորդներին տրամադրել 27.5 մլրդ ՀՀ դրամի դրամական միջոցներ:

- Պարտատոմսերի պորտֆելից ստացվել է շուրջ 7.95 մլրդ ՀՀ դրամի տոկոսային եկամուտ, որից շուրջ 98%-ը բաժին է ընկել պետական պարտատոմսերին: Աճը 2016թ-ի համեմատ կազմել է 64%:

- Պարտատոմսերի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է շուրջ 264.6 մլն ՀՀ դրամ:

- Բանկը, որպես գործակալ, երկրորդային շուկայում մշտապես իրականացրել է պետական պարտատոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ՝ առաջարկելով շուկայի լավագույն գները:

- Պետական պարտատոմսերի գնանշումները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքէջում, Bloomberg և Reuters Eikon համակարգերում բացված Բանկի պաշտոնական էջերում:

- Տարեվերջի դրությամբ Բանկը հանդիսացել է 8 պարտատոմսի և 1 բաժնետոմսի գծով Շուկա ստեղծող և Ֆոնդային բորսայում ապահովել է արժեթղթերի ամենօրյա գնանշում:

*Բրոքերային, ռեեստրավարման և պահառության գործունեություններ*

- Բանկը բրոքերային ծառայությունների շրջանակներում իրականացրել է 64.5 մլրդ ՀՀ դրամի արժեթղթերի առք/վաճառքի (ներառյալ ֆինանսական ֆյուչերսները) գործառնություններ, որից 81%-ն օտարերկրյա ընկերությունների թողարկած բաժնետոմսերով և ածանցյալ գործիքներով գործառնություններ են: Նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է շուրջ 2.6 անգամ:

- Բանկը ռեեստրավարման պայմանագիր է կնքել 13 թողարկողի հետ (որից 4-ը՝ պարտատոմսերի ռեեստրի վարման գծով), իսկ պահառության պայմանագիր՝ 18 հաշվետիրոջ հետ:

- Տարեվերջի դրությամբ Բանկը վարում է 97 թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի ռեեստր և 154 հաշվետիրոջ հետ պահառության հաշիվներ:

**The main indicators and events characterizing the Bank's investment activity in 2017**

*Dealing activity*

- The Bank was ranked the first in terms of the securities portfolio volume in Armenian banking system.

- The end-of-year balance-sheet value of the securities' portfolio was 82.6 billion Drams, with the nominal value AMD 80.6 billion. The government bonds makes up 97% of the securities portfolio.

- The portfolio of the securities has increased by 35.8% as compared to the previous year and by 31.1% against the planned indicator of the reporting year.

- The Bank's Eurobond portfolio increased from USD 16 million to USD 19.5 million.

- The Bank has purchased government bonds with a nominal of AMD 36.6 billion and sold bond worth AMD 22.6 billion, AMD 8.2 billion of which were bonds bought from the primary market and AMD 2.8 billion sold to the Issuer through repurchase auctions.

- The Bank has implemented AMD 1.9 billion worth transactions in corporate bonds.

- The Bank has attracted funds worth AMD 175.4 billion through repo agreements and has provided to the customers with funds worth AMD 27.5 billion.

- The bond's portfolio has generated interest income of about AMD 7.95 billion, about 98% of which is the government bond's share. Compared to 2016, there was 64% growth rate.

- The net income from purchase and sale of bonds amounted to AMD 264.6 million.

- As an agent the Bank has always performed a mandatory bilateral quotation of government bonds in secondary market; offering the most convenient prices.

- The Government bonds' quotations are posted on the the official page of the Bank at Bloomberg and Reuters Eikon infromation systems.

- By the end of the year, the Bank has been the market maker of 8 bonds and 1 share, and has provided daily quotations of securities in the Stock Exchange.

*Securities underwriting, Brokerage and Custodial activities*

- Within the scope of brokerage activities, the Bank has actualized operations on purchase / sale of securities worth AMD 64.5 billion, (inclusive financial futures), 81% of which are transactions with shares issued by foreign companies and derivative instruments. About 2.6 times growth has been achieved, compared with the previous year's results.

- The Bank has concluded registry maintenance agreements with 13 issuers (4 of which were on bond registry maintainance), and custody service contracts with 18 account holders.

### *Արժութային և ոսկով գործառնություններ*

- Բանկը միջբանկային և ներբանկային արտարժութային շուկայում հիմնական փոխարկելի արժույթներով իրականացրել է շուրջ 250 մլրդ ՀՀ դրամի առք ու վաճառքի գործառնություններ:

- Բանկը միջբանկային և ներբանկային շուկայում իրականացրել է ավելի քան 360 մլրդ ՀՀ դրամի արտարժութային սվոփ գործառնություններ:

- Բանկն իրականացրել է ոսկու ձուլակտորներով և անկանխիկ ոսկով շուրջ 143 մլն ՀՀ դրամի գործառնություններ:

### *Միջոցների ներգրավմանն ուղղված ներդրումային գործառնություններ*

- Բանկը միջոցների ներգրավման նպատակով իրականացրել է պարտատոմսերի 3 տրանշների թողարկում 10 մլն ԱՄՆ դոլար, 10 մլն եվրո և 2 մլրդ ՀՀ դրամ անվանական ծավալներով, որոնք տեղաբաշխվել են համապատասխանաբար 7, 6 և 4 տարի մարման ժամկետներով և 6.75%, 5.00% և 12.75% արժեկտրոնային եկամտաբերություններով: Նշված տրանշի պարտատոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի "Bbond" հարթակում ու պարտատոմսերի ամենօրյա երկկողմանի գնանշումներն (մարքեթ մեյքինգ) իրականացվում են «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից:

- Տարեվերջի դրությամբ Բանկն ունեցել է ցուցակված 6 տրանշի պարտատոմսեր:

- Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ֆոնդային բորսայում իրականացվել է 56 գործարք՝ 1.4 մլն ԱՄՆ դոլար, 122 հազ. եվրո և 120.6 մլն ՀՀ դրամ ծավալներով:

- By the end of the year, the Bank manages securities registry issued by 97 issuers and custody accounts with 154 account holders.

### *Currency and gold transactions*

- The Bank in the inter-bank and intra-bank foreign exchange market performed around AMD 250 billion currency exchange operations with main international convertible currencies.

- The Bank has conducted foreign currency swap transactions of more than AMD 360 billion in the interbank and intra-bank market.

- The bank has carried out purchase and sell of cash and non-cash transactions with precious metals of around AMD 143 million.

### *Funds attracting activities*

- For the purpose of attracting funds, the Bank has issued 3 tranches of bonds with a nominal value of USD 10 million, EUR 10 million and AMD 2 billion, with 7, 6 and 4 years' maturity terms and 6.75%, 5.00% and 12.75% coupon yields, respectively. These bonds have been listed on the "Bbond" platform of "NASDAQ OMX Armenia" OJSC and daily bilateral quotation (market making) is carried out by "ARARATBANK" OJSC and "AMERIABANK" CJSC.

- By the end of the year Bank had 6 listed bonds' tranches.

- Total 56 transactions have been performed with the bonds issued by the Bank in the Stock Exchange, with a turnover of USD 1.4 million, EUR 0.122 million and AMD 120.6 million.



*Ձորագետի կիրճը, Լոռի*
*Gorge of Dzoraget, Lori*

## Արժեթղթերի պորտֆելից ստացված եկամուտները (մլն ՀՀ դրամ)
## Revenue from the securities portfolio (AMD mln)




## Արժեթղթերի պորտֆելի ծավալը (մլրդ ՀՀ դրամ)
## Volume of securities portfolio (AMD bln)





Նուռ, Մեղրի
*The pomegranate, Meghri*

## Ֆինանսական արդյունքներ
## Financial results

Բանկի կողմից ձևավորված զուտ շահույթը հիմնականում պայմանավորված է տոկոսային եկամուտներով, սակայն զգալի չափով ավելացել են նաև ոչ տոկոսային եկամուտները, որն էլ պայմանավորված է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տարեցտարի բազմազանեցման և բարելավման գործընթացներով:

The net profit of the Bank is mainly formed by interest income, but non-interest income has also significantly been increased, which is conditioned by the Bank's versatile and constantly developed services offered.

## Բանկի տարեկան շահույթի աճի դինամիկան (մլն ՀՀ դրամ)

## Dynamics of the Bank's annual profit growth (AMD mln)




## Բանկի տարեկան շահութաբերության ցուցանիշները (%)

## Dynamics of the Bank's annual indicators of profitability (%)




2017թ-ին Բանկի ակտիվներում շարունակում են գերակշռել պետական պարտատոմսերում ներդրումները, վարկային և ֆակտորինգային գործիքներում տեղաբաշխված միջոցները, որոնք հանդիսանում են Բանկի եկամուտների գոյացման հիմնական աղբյուրները:

In 2017, the majority of Bank's assets continue to be formed with investments in government bonds, credit and factoring instruments, which are key sources for the Bank's income generation.

## Ակտիվների կառուցվածքը և դինամիկան
## The Structure and Dynamics of Assets




Բանկը մշտապես կարևորում է պարտավորությունների կազմի և կառուցվածքի դիվերսիֆիկացմանն ու ներգրավվող ռեսուրսների ինքնարժեքի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ շարունակաբար խորացնելով տեղական ու միջազգային ֆինանսական կառույցների հետ առկա համագործակցությունը և աշխատանքներ տանելով ինչպես նոր ֆինանսական կառույցների հետ համագործակցության հաստատման, այնպես էլ ֆինանսական նոր գործիքներով միջոցների ներգրավման ծավալների ավելացման ուղղությամբ:

The Bank highly values the diversification of the liabilities' structure and the implementation of activities aimed at reducing the cost price of attracted funds; continuously strengthening its cooperation with existent local and international financial institutions and by striving towards establishing cooperation with new financial institutions and increasing the scope of funding by developing new financial instruments.

Պարտավորությունների ժամկետային կառուցվածքի դիվերսիֆիկացման և ինքնարժեքի նվազեցման նպատակով Բանկը միջոցներ է ներգրավել նաև կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման միջոցով:

In order to diversify the structure of liabilities and reduce the cost of sale, the Bank involves resources from issuance and allocation of corporate bonds.

## Պարտավորությունների կառուցվածքը և դինամիկան
## The dynamics and structure of liabilities



Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

"ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ" ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

*Կարծիք*
Մենք աուդիտի ենք ենթարկել "Արմսվիսբանկ" Փակ Բաժնետիրական Ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 31 դեկտեմբերի 2017թ. դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

*Կարծիքի հիմքեր*
Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող Էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Աուդիտի առանցքային հարցեր*
Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

- **Վարկերի արժեզրկման գծով պահուստի ձևավորում**

Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Դատողությունները և ենթադրությունները կարող են վերաբերել արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի գնահատմանը, վարկառուների ֆինանսական վիճակի, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի, գրավների արժեքի և իրացման ժամկետների, ինչպես նաև կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասների գնահատմանը:

Անհատապես էական վարկերի գծով ձևավորված արժեզրկման պահուստների գնահատման համար մեր կողմից կիրառված ընթացակարգերը ներառել են արժեզրկման բացահայտման և քանակական գնահատման հիմքում ընկած դատողությունների և ենթադրությունների, գրավների շուկայական արժեքների ուսումնասիրությունները, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները և այլն:

Խմբային արժեզրկման արդյունքում ձևավորված պահուստների ճշգրտության գնահատման համար մենք ուսումնասիրել



Grant Thornton

# Independent auditor's report

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

To the shareholders of "ARMSWISSBANK" CLOSED JOINT STOCK COMPANY

*Opinion*
